Տարիքի հետ Գրիգորի մէջ աճեց սէրը դէպ ի ճարտարախօսութիւնը, որը համարվում էր ամենալաւ և զօրեղ միջոցը ճշմարտութիւնը պաշտպանելու: Նա իհարկէ դեռ կանուխ հասակից տաղտկացած էր Նազիանզի պէս փոքրիկ քաղաքի խեղճուկ կրթութեան աղբիւրներից, և Նորա հայրը բարեբաղդաբար բաւական կարողութիւն ունէր որ, Նորան Կապադովկիայի գլխաւոր քաղաքը՝ Կեսարիա ուղարկէր:

(Շարունակելի) Յ. Վ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ

Վեհափառ Հայրապետի Դիւանատան կառավարիչ Սահակ Վարդապետ Բաղդասարեանց արձակեցաւ ի պաշտօնէ Դիւանադպրութեան և ի տեղի Նորին կարգեցաւ Սահակ Աբեղայն Ամատունի:

Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Գերապատիւ Եսայի եպիսկոպոս Աստուածատրեանցին Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց առաջնորդ նշանակելով, առանձին գրութեամբ առ Արեգակնափայլ Շահն Պարսից և առ Սադրազամն, յանձնարարած էր զՆորին գերապատուութիւնը բարեհաճ խնամոց Նորին Մեծութեան.

Ի պատասխանի գրութեանց իւրոց Նորին Օծութիւնը ստացաւ հետևեալ պատասխանիքը Նորին Մեծութիւնից Շահնշահից և Նորա Սադրազամից.

Թարգմանութիւն հրովարտակի Արեգակնափայլ Շահին Պարսից առ Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Մակար:

Կնիք Նորին Մեծութեան Նասր Էդդին Շահի

Նորին Սրբութեան Մեծի Պատրիարքին ամենայն Հայոց (որ) ի վերայ երկրագնդի, — Ըղեցի ի վե-

բայ Նորա օրհնութիւնն Աստուծոյ և հաստատեսցի բարեհաճութիւն յարաբերութեանց Մերոց առ Նա։

Ի ճանապարհորդութեանս Մերում ի Ֆրանկիստան տեսակցեալ ընդ Ձեզ անձամբ, հաւաստի եղէ փառաւորեալ և հրեշտակային բնաւորութեան և գործոց Ձերոց, ուստի և յարաժամ ակն ունէի թղթոյն Ձերոյ, զի տեղեկացայց զշահեկան և զբարեալաւ կացութենէ առողջութեան Ձերդ Սրբութեան։

Արդ՝ այժմ սրբազան եպիսկոպոսն Նսայի կարգեալն ի Ձենջ ի հովուապետութիւն ամենայն Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի՝ ժամանեալ այսր, յանդիման եղև Մեզ անձամբ և մատոյց զթուղթ մտերմութեան Ձերոյ, առթելով ուրախութիւն բարեկամական սրտին Մերոյ։

Ըստ ցանկութեան Ձերումդ Սրբութեան տուաւ հրաման ամենայն կառավարչաց Խարձրադոյն թագաւորութեանս Մերոյ Իրանի և պատուիրեցաւ՝ ցուցանել Նորին սրբազնութեան եպիսկոպոսին Նսայեայ զաջակցութիւն պատշաճաւոր և զկարելին օգնականութիւն ի կատարումն ցանկութեանց և պահանջից եպիսկոպոսին։

Նմք և մեզամք բաղձացողք քաջառողջութեան Ձերդ Սրբութեան և խնդրեմք վերառաքել զսրտնեռանդն աղօթս վասն Մեր ի սրբավայրսն Էջմիածնի։

Յամենայն Ջամմադիալ-ուլ, յամի 1308, ի քառասներորդ յերրորդ ամի թագաւորութեան Մերոյ։

Թարգմանութիւն թղթոյ Մեծի Նախարարին Պետութեան Պարսից։

Ձեկուցանի.

Զպատուական և զսիրալիր նամակ Նորին Սրբութեան, որով ծանուցանէ զկարգմանէ սրբազան եպիսկոպոսին Նսայեայ ի փոխանորդ Ինքեան, ի կրօնական պետ և յազգային Առաջնորդ Հայոց, բնա-

կելոց ի սփիւռս Իրանի, ի Ֆարս և ի Հնդկաստան, ընկալայ ամենայն յարգանօք:

Ունելով ի մտի զթանկագին յիշատակս, որք տպաւորեցան յիս ի սրտագին և յանկեղծ տեսակցութեան մերում, նամակդ այդ նոր առիթ եղև ինձ ուրախութեան: Եպիսկոպոսն արժանաւոր յարգութեամբ ընկալաւ ի տեսութիւն Ինքնակալին Շահնշահի, — յաւերժացուցէ Տէր ի յամայր ամս զթագաւորութիւն Նորա: Եպիսկոպոսն արժանացաւ Բարձրագոյն ուշադրութեան և ընդունելի եղև կարգումն Նորա ի պաշտամանն:

Զթուղթ Նորին Սրբութեան եպիսկոպոսն մատոյց Նորին Մեծութեան և անձամբ խօսեցաւ ընդ Նմա բանիւ բերանոյ ամենայն անկեղծութեամբ: Ցոյժ հաճելի գտան իմաստք թղթոյն և բանք եպիսկոպոսին, և ի գործադրութեանն՝ ըստ արժանւոյն գտցեն զամենայն աջակցութիւն:

Արդ՝ ամենայն ակնածութեամբ աղերսեմ զՍրբութիւն Ձեր, յաղօթս ձեր ի Սուրբ Տեղիս մի՛ մոռանալ և զիս, զանձնանուէրս ընկալարուք յինէն զհաւաստիս սրտագին և մտերիմ անձնանուիրութեանս:

Հոգւով չափ անձնանուէր Էմինուս Սուլթան:

Ցամսեանն ջամմադիալ—ուլ· 1308 ամի:

Ի վերայ ծրարի՝ Նորին Վեհափառութեան գրեալ է հետևեալ հասցէն հանդերձ կնքով Նախարարին արտաքին գործոց:

Նորին Սրբութեան Մեծին յամենայն Կաթուղիկոսացն (խալիֆ) Յիսուսի՝ Սրբազնագունին յամենայն կրօնաւորացն Ասիայի՝ Կաթուղիկոսին Կաթուղիկոսաց՝ և Մեծի Հայրապետին ամենայն Հայոց որ ի սփիւռս աշխարհի, Ամակարայ: